



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5 մարտի 2026 թվական

ք. Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահի պարտականությունները կատարող Արման Թովմասյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/10445/05/25 գործի ենթակայությունը և ընդդատությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 17-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Գործի դատավարական նախապատմությունը.

1. Ա.Զ. անունից 2025 թվականի ապրիլի 26-ին ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված թիվ 10 դիմումով պահանջվել է հետևյալը՝ *«խնդրում եմ*

5.1. Փոխհատուցել՝ [Ա.Զ.] հասցված նյութական՝ գույքային վնասը՝ 30.000,00 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

5.2. Փոխհատուցել՝ [Ա.Զ.] հասցված ոչ նյութական վնասը.

5.2.1. մասնավոր և ընտանեկան կյանքի, արժանապատվության, պարվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը,

5.2.2. *իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը,*

5.2.3. *արդար դատաքննության իրավունքի քաղաքացիներին դատարանի մարտնչության իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը»¹:*

2. Ա.Զ. ներկայացուցիչը 2025 թվականի հուլիսի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, 2025 թվականի ապրիլի 26-ի թիվ 10 դիմումն ըստ էության քննության առնելու պահանջի մասին²:

3. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 21-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

4. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

5. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի փետրվարի 19-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին և 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 77-րդ հոդվածին, 81-րդ հոդվածի 1-ին մասին և 127-րդ հոդվածի 10-րդ մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ինչպես նաև ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ և ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱԲԴ/1369/02/09, 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱԲԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14, 2016 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ ՎԴ/1761/05/14 և 2018 թվականի նոյեմբերի 30-ի թիվ

¹ Տե՛ս դատական գործը, թերթեր 25-43:

² Տե՛ս դատական գործը, թերթեր 4-24:

ՎԴ/0832/05/16 գործերով կայացված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին, ՀՀ վարչական դատարանը 2026 թվականի հունվարի 21-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) [Ս]ույն դեպքում թեպետ պարասիանողը ՀՀ ֆինանսների նախարարությունն է՝ վարչական մարմին, այդուհանդերձ վեճի առարկան միայն բավարար հիմք չէ իրավահարաբերության բնույթը հանրային դասակարգելու և համապարասիանաբար, վեճը վարչական դատարանի ընդդատության որակելու համար: Որոշիչ գործոնը վիճելի հարաբերությունների բովանդակությունն ու բնույթն է, ինչպես նաև նշված պահանջի առաջացման հիմքը: Սույն դեպքում գործի փաստական հանգամանքներից հետևում է, որ Հայցվորի կողմից պահանջվող վնասը վարչական ակտի արդյունք չէ, չի առաջացել ՀՀ ֆինանսների նախարարության գործողությամբ կամ անգործությամբ, չի առաջացել ՀՀ ֆինանսների նախարարության իրականացրած վարչարարության արդյունքում:

Հայցվորը վնասը վերագրում է ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից հերազայում հակասահմանադրական ճանաչված քաղաքացիական իրավունքի դրույթի, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 8-րդ մասի կիրառմանը: Սակայն, քաղաքացիական գործի բնության ընթացքում ընդհանուր իրավասության դատարանի կողմից իրավական դրույթի կիրառումը չի հանդիսանում վարչարարություն:

Բացի այդ, Հայցվորի ներկայացված պահանջը ուղղված է բացառապես պարվի և արժանապարվության պաշտպանության վերաբերյալ կոնկրետ քաղաքացիական գործի բնության արդյունքում առաջացած նյութական և ոչ նյութական վնասների փոխհարուցմանը: Նման պահանջն ուղղված չէ հանրային շահի իրացմանը կամ պաշտպանությանը, չունի համընդհանուր կամ կարգավորող բնույթ, չի վերաբերում անորոշ թվով անձանց: Դատարանի գնահատմամբ իրավահարաբերությունը բնույթով մասնավոր է, քանի որ վերաբերում է քաղաքացիական դատավարության ընթացքում անձանց միջև կոնկրետ վեճը լուծելու հետևանքներին:

Հաշվի առնելով ողջ վերը նշվածը Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ վեճը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից, հետևաբար ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի դրույթի

համաձայն՝ հայցադիմումը ենթակա է քննության ընդհանուր իրավասության դատարանում (...)»³:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին և 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 2-րդ և 9-րդ մասերին, 5-րդ, 188-րդ, 199-200-րդ և 360-362-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին և 81-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՄԴՈ-787 որոշմամբ և ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2011 թվականի հուլիսի 27-ի թիվ ԵԱԲԴ/0433/02/11, 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ԵՄԴ/1029/02/14 և 2023 թվականի մարտի 2-ի թիվ ԵԴ/27468/02/19 գործերով կայացված որոշումներով արտահայտված իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ դիմել է ՀՀ Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. «(...) Քննարկվող դեպքում անձը պահանջ է ներկայացրել ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ խնդրելով պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարին ըստ էության քննության առնել Արտակ Հայկազի Ջեյնսայանի «Նյութական և ոչ նյութական վնասների հարուցման պահանջի մասին» N 10 դիմումը, որպիսի պայմաններում Դատարանի գնահատմամբ վեճը ծագել է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման ենթադրյալ պարտականությանը, ինչը ենթադրում է վարչական մարմնի կողմից իր գործադիր-կարգադրիչ գործառույթի իրականացում (կողմերը չեն հանդիսանում իրավահավասար սուբյեկտներ, մասնավորապես րվյալ իրավահարաբերության մեջ ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին), հեղևաբար անկախ

³ Տե՛ս դատական գործը, թերթեր 134-140:

նրանից «Դիմումի» բովանդակությունը ինչ է, սույն դեպքում պահանջը վերաբերում է նշված դիմումին պարասիսանելուն պարտավորեցնելուն, ինչպիսի վեճը ենթակա չէ քննության ՀՀ առաջին արյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում:

Վերը նշվածի հիման վրա՝ Գալարանը հանգում է այն եզրակացության, որ սույն գործը պետք է քննվի ՀՀ վարչական դատարանում, այսինքն՝ համաձայն չէ սրացած գործի ենթակայությանը, և գործի ենթակայությունը որոշելու համար այն պետք է ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան (...)⁴:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հերևությունն այն մասին, որ թիվ ՎԳ/10445/05/25 գործն ըստ Ա.Զ. հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 26-ի թիվ 10 դիմումն ըստ էության քննության առնելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Մասնագիտացված դատարաններն են՝

1) վարչական դատարանը. (...):»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին արյանի դատարանում, բացառությամբ «Մասնկության մասին» Հայաստանի

⁴ Տե՛ս դատական գործը, թերթեր 146-148:

Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավագոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պարճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Առաջին արյանի դարարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դարարանին ընդդարյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը (...):»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «1. Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դարարանը կամ արբիտրաժային տրիբունալը (այսուհետ՝ դարարան):»:

2. Պայմանագրով կարող է նախատեսվել կողմերի միջև վեճի կարգավորում մինչև դարարան դիմելը:

3. Վարչական կարգով քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է միայն օրենքով նախատեսված դեպքերում: Վարչական կարգով ընդունված որոշումը կարող է բողոքարկվել դարարան»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ «Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացվում է՝

(...)

10) վնասներ հատուցելով»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պարճատված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չարացված եկամուտները, որոնք այդ անձը կտանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը:

(...)

4. Ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման միայն օրենքով նախատեսված դեպքերում (...):»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված քաղաքացիական իրավունքի սուբյեկտների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ փոխալ սուբյեկտների առանձնահատկություններից»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-ին հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, իսկ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1063-րդ հոդվածի համաձայն՝ «Զաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ապօրինի գործողություններով (անգործությամբ) ներառյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի՝ օրենքին կամ այլ իրավական ակտին չհամապատասխանող ակտ հրապարակելու հետևանքով, պատճառված վնասը հատուցում է Հայաստանի Հանրապետությունը կամ համապատասխան համայնքը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1065-րդ հոդվածի համաձայն՝ «Այն դեպքերում, երբ սույն օրենսգրքին կամ այլ օրենքներին համապատասխան վնասը հատուցվում է Հայաստանի Հանրապետության կամ համայնքի կողմից, նրանց անունից հանդես են գալիս համապատասխան ֆինանսական մարմինները, եթե այդ պարտականությունը, սույն օրենսգրքի 129 հոդվածի 3-րդ կետին համապատասխան, դրված չէ այլ մարմնի, իրավաբանական անձի կամ քաղաքացու վրա»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1075-րդ հոդվածի համաձայն՝ «Դատարանը, բավարարելով վնասի հատուցման պահանջը, գործի հանգամանքներին համապատասխան, պարտավորեցնում է վնասը պատճատելու համար

պարասխանարու անձին վնասը հարուցել բնեղենով (տրամադրել նույն տեսակի և որակի գույք, վերանորոգել վնասված գույքը և այլն) կամ հարուցել պարճառված վնասները (17 հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր)»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերի համաձայն՝ «4. Ոչ նյութական վնասը հարուցվում է պերական բյուջեի միջոցների հաշվին: Եթե սույն օրենսգրքի 162.1 հոդվածով սահմանված հիմնարար իրավունքը խախտվել է տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից, ապա ոչ նյութական վնասը հարուցվում է համապարասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին:

5. Ոչ նյութական վնասի հարուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամրության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապարասխան»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 95-րդ հոդվածի համաձայն՝ «1. Վարչական մարմինների կողմից իրականացվող վարչարարության հետևանքով անձանց պարճառված վնասը ենթակա է հարուցման՝ սույն բաժնի դրույթներին համապարասխան:

2. Ոչ իրավաչափ վարչարարության, իսկ սույն բաժնով նախատեսված դեպքերում նաև իրավաչափ վարչարարության հետևանքով անձանց պարճառված վնասի համար պարասխանարվությունը կրում է՝

ա) Հայաստանի Հանրապետությունը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում:

բ) համապարասխան համայնքը՝ սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «գ» ենթակետերում նշված վարչական մարմինների դեպքում:

3. Սույն հոդվածի 2-րդ մասի «ա» կետով նախատեսված դեպքում վնասի հարուցումը կարարվում է Հայաստանի Հանրապետության պերական բյուջեի, իսկ «բ» կետով նախատեսված դեպքում համապարասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 96-րդ հոդվածի համաձայն՝ «Վնասի հարուցում չի իրականացվում, քանի դեռ վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով ոչ իրավաչափ չի ճանաչվել, բացառությամբ սույն օրենքի 109-րդ հոդվածով նախատեսված դեպքերի»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 100-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վնասի հայրուցման պահանջը պետք է ներկայացվի այն վարչական մարմին, որի վարչարարության հետևանքով պատճառվել է դա»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պարիվր, բարի համբավը կամ արժանապատվությունն արաստվորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հարուցում կամ առաջացած հետևանքների վերացում պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով»:

Նախկինում կայացված որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանը փաստել է՝ «/Ի/նչպես ցանկացած հարաբերություն, այնպես էլ իրավական նորմերի միջոցով կարգավորվող հասարակական հարաբերությունը՝ իրավահարաբերությունը, որոշակի փոխկապակցված տարրերի (սուբյեկտ, օբյեկտ և բովանդակություն) ամբողջություն (համակարգ) է, որոնց բովանդակային-որակական տարրերությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերությունները տարանջատելու միմյանցից: Մասնավորապես՝ հանրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը:

Իրավահարաբերությունը հանրային հարկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձինք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ:

Իրավահարաբերության բովանդակությունը փոխադարձ իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որը հանրային բնույթի իրավահարաբերության պարագայում հանգում է հետևյալին. այդ հարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանության սուբյեկտն ունի օրենքով սահմանված իր իշխանական լիազորություններն իրականացնելու պարտականություն, ինչն էլ հանդիսանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց հանրային սուբյեկտիվ իրավունքների իրացման անհրաժեշտ և բավարար պայմանը:

ՀՀ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ հանրային իրավահարաբերության սուբյեկտ հանդիսացող իշխանության մարմինը հանրային իրավահարաբերության շրջանակներում կարող է օժտված լինել ոչ թե իրավունքներով, այլ մի քանի հնարավոր իրավաչափ լուծումներից որևէ մեկն ընտրելու, այսինքն՝ օրենքով սահմանված որոշակի դեպքերում և բավարար փաստական հիմքերի առկայության պայմաններում վարչական հայեցողություն դրսևորելու հնարավորությամբ: Միևնույն ժամանակ հանրային իրավահարաբերության իշխանական լիազորություններով չօժտված կողմը բացի իր հանրային սուբյեկտիվ իրավունքներից կարող է կրել նաև այդ հարաբերության բովանդակության մեջ ներառված պարտականություններ, քանի որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրենց հանրային սուբյեկտիվ իրավունքներն իրացնելիս պետք է պահպանեն նորմատիվ իրավական ակտերով սահմանված ընթացակարգային իրավական կարգավորումներն ու օրենսդրական բոլոր պահանջները:

Իրավահարաբերության օբյեկտն այն նյութական և (կամ) հոգևոր արժեքն է, ինչի կապակցությամբ որոշակի իրավաբանական փաստի (փաստական կազմի) հիման վրա կողմերի միջև ծագում է իրավահարաբերությունը: Հանրային իրավահարաբերությունները ծագում են հանրային շահը սպասարկող սուբյեկտների՝ պետության և համայնքի կողմից այն իրացնելու և կյանքի կոչելու, սոցիալական ոլորտում այն առարկայացնելու կապակցությամբ, քանի որ հանրային իրավունքով կարգավորվող հարաբերության շրջանակներում սուբյեկտը գործում է ոչ թե իր, այլ հանրային շահերի վերհանման և ասպահովման նպատակով:

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ իրավունքում «շահ» հասկացության դասակարգումը հանրայինի և մասնավորի խիստ պայմանական է, քանի որ հանրային և մասնավոր շահերը հանդես են գալիս փոխկապակցվածության մեջ և գրեթե միշտ փոխլրացնում են միմյանց: Այսպես, իրավական շահը

դասակարգվում է հանրայինի և ոչ հանրայինի՝ դասակարգման հիմքում դնելով այդ շահը կրող սուբյեկտին. հանրային շահի կրողը հասարակությունն է՝ որպես մեկ միասնական, ամբողջական օրգանիզմ: Ընդ որում, շահը հանրային որակելու համար պարտադիր նախապայմանն է հասարակության բոլոր անդամների կողմից այդ շահի ընկալելի, ընդունելի լինելու հանգամանքը: Սակայն հանրային շահը փարբերվում է մասնավոր շահից ոչ միայն սուբյեկտային չափանիշով, այլ նաև իր առարկայով, քանի որ հանրային շահի առարկան համընդհանուր, համամարդկային որոշակի բարիքներն են, որոնց առարկայացումը հասարակական կյանքում անհրաժեշտ նախապայման է հասարակության գոյարևման և հետագա զարգացման համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ Վճարել դատարանն արձանագրել է, որ հանրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Վճարել դատարանի գնահատմամբ իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդարյալ լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՛ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՛ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՛ ոչ:

ՀՀ Վճարել դատարանի գնահատմամբ միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդարյան հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդարյալ չեն Հայաստանի

Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պարժի կայարանն հետ կապված գործերը»⁵:

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Մինևույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ վնասի հատուցման հետ կապված հարաբերություններում օրենսդիրը, որպես հանրային հարաբերություններից բխող վնասի հատուցման տեսակ, տարանջատել է բացառապես վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման ինստիտուտը, որպիսի իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ վարչական մարմնի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման արդյունքում պատճառված վնասը: Ընդ որում, հարկ է ընդգծել, որ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման տրամադրման վերաբերյալ քննություն՝ վարչարարություն իրականացնելու լիազորությամբ օժտված է բացառապես այն նույն վարչական մարմինը, որի կողմից նախկինում իրականացված վարչարարության արդյունքում անձին պատճառվել է վնասը: Այլ կերպ ասած, Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ հանրային հարաբերություններից բխում են և ՀՀ վարչական դատարանի քննությանը ենթակա են բացառապես վնասի հատուցման այն դեպքերը, երբ մինևույն վարչական մարմնին դիմում է ներկայացվում իր իսկ կողմից նախկինում իրականացված վարչարարության հետևանքով պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ:

⁵ Տե՛ս, «Վեստ» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Գորվորեյչն» ընկերություն, թիվ ՎԴ/1621/05/14 վարչական գործով ՀՀ Վճարելի դատարանի 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

Այսինքն, եթե վնասի հատուցման պահանջը չի վերաբերում դիմումը ստացող վարչական մարմնի կողմից նախկինում իրականացված վարչարարությամբ վնաս պատճառելուն, ապա այդպիսի պահանջ ստացող վարչական մարմինը՝ որպես հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտ, օժտված չէ նման պահանջով դիմումը քննելու՝ վարչարարություն իրականացնելու լիազորությամբ: Հետևաբար նշված պարագայում դիմումը բխում է վնասի հատուցման մասնավոր՝ քաղաքացիաիրավական հարաբերություններից, իսկ այդպիսի հարաբերության կողմերը հանդիսանում են իրավահավասար:

Մասնավորապես, եթե իրավահարաբերությունն առնչվում է այնպիսի վնասի, որը վարչարարությամբ չի պատճառվել, և այդ վնասի հատուցման հետ կապված մասնակիցը Հայաստանի Հանրապետությունն է, ապա վերջինս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի իմաստով, այդ հարաբերություններում հանդես է գալիս իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերի համատեքստում:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ա.Զ. 2025 թվականի հուլիսի 3-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության, 2025 թվականի ապրիլի 26-ի թիվ 10 դիմումն ըստ էության քննության առնելու պահանջի մասին,

Ա.Զ. անունից 2025 թվականի ապրիլի 26-ին ՀՀ ֆինանսների նախարարին հասցեագրված թիվ 10 դիմումով պահանջվել է հետևյալը՝ «*ինդրում եմ*

5.1. Փոխհատուցել՝ Ա.Զ. հասցված նյութական՝ գույքային վնասը՝ 30.000,00 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

5.2. Փոխհատուցել՝ Ա.Զ. հասցված ոչ նյութական վնասը.

5.2.1. մասնավոր և ընդհանրական կյանքի, արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը,

5.2.2. իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը,

5.2.3. արդար դատաքննության իրավունքի բաղադրարարը դատարանի մատչելիության իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ

դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը»⁶,

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի հունվարի 21-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ հայցադիմումով ներկայացված պահանջը ուղղված է բացառապես պատվի և արժանապատվության պաշտպանության վերաբերյալ կոնկրետ քաղաքացիական գործի քննության արդյունքում առաջացած նյութական և ոչ նյութական վնասների փոխհատուցմանը: Նման պահանջն ուղղված չէ հանրային շահի իրացմանը կամ պաշտպանությանը, չունի համընդհանուր կամ կարգավորող բնույթ, չի վերաբերում անորոշ թվով անձանց, ուստի իրավահարաբերությունը բնույթով մասնավոր է, քանի որ վերաբերում է քաղաքացիական դատավարության ընթացքում անձանց միջև կոնկրետ վեճը լուծելու հետևանքներին:⁷

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի փետրվարի 17-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին այն պատճառաբանությամբ, որ վեճը ծագել է այնպիսի իրավահարաբերությունից, որի բովանդակությունը հանգում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման ենթադրյալ պարտականությանը, ինչը ենթադրում է վարչական մարմնի կողմից իր գործադիր-կարգադրիչ գործառույթի իրականացում (կողմերը չեն հանդիսանում իրավահավասար սուբյեկտներ, մասնավորապես տվյալ իրավահարաբերության մեջ ՀՀ ֆինանսների նախարարությունը հանդես է գալիս որպես հանրային իշխանական լիազորություններ կրող մարմին)⁸:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ Հայցվորը, իրավունքների դատական պաշտպանության դիմելով, ակնկալել է պարտավորեցնել ՀՀ ֆինանսների

⁶ Տե՛ս սույն որոշման 1-ին և 2-րդ կետերը:

⁷ Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

⁸ Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

նախարարությանը քննության առնել 2025 թվականի ապրիլի 26-ի թիվ 10 դիմումը, այն է՝ առարկայական լուծում տալ, հետևյալ հարցերին.

- Փոխհատուցել՝ Ա.Զ. ին հասցված նյութական՝ գույքային վնասը՝ 30.000,00 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

- Փոխհատուցել՝ Ա.Զ. հասցված ոչ նյութական վնասը.

- մասնավոր և ընտանեկան կյանքի, արժանապատվության, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը,

- իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը,

- արդար դատաքննության իրավունքի բաղադրատարր՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման դիմաց՝ 500.000,00 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով, գումարած նշված գումարի վրա հաշվարկվող հնարավոր բոլոր տեսակի հարկերը:

Վերը շարադրվածից հետևում է, որ հայցադիմումի առարկան կազմող հիմնական պահանջը վերաբերում է այնպիսի նյութական և ոչ նյութական վնասների հատուցմանը, որոնք չեն պատճառվել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախկինում իրականացված վարչարարության հետևանքով, որի պարագայում ՀՀ ֆինանսների նախարարությունը, հանրային հարաբերությունների համատեքստում, իրականացնելու որևէ հանրային-իշխանական գործառույթ չունի:

Նշվածից հետևում է, որ սույն գործով կողմերի միջև ծագած վեճն ուղղակիորեն վերաբերում է մասնավոր իրավահարաբերություններին, քանզի վեճի առարկան առնչվում է այնպիսի վնասին, որը վարչարարությամբ չի պատճառվել: Հետևաբար վեճը պետք է քննության առնվի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից՝ որպես վարչարարությամբ չպատճառված վնասի հատուցման հետ կապված վեճ:

12. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/10445/05/25 գործն ըստ Ա.Զ. հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 26-ի թիվ 10 դիմումն ըստ էության քննության առնելու պահանջի մասին, պետք է քննվի ՀՀ վարչական դատարանում, հիմնավոր չէ:

Ուստի, Ա.Զ. ի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/10445/05/25 գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/10445/05/25 գործն ըստ Ա.Զ. հայցի ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 26-ի թիվ 10 դիմումն ըստ էության քննության առնելու պահանջի մասին ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
ԱՐՄԱՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ**